




ՊԻՈՆ ՀԱԿՈՐՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ա.

Եկեղեցական դասերն ու աստիճաններն ունեն իրենց խորհուրդը, իրենց իրավասության սահմանները, իրենց պարտադրանքներն ու առանձնաշնորհումները: Դրանք ո՛չ միայն չի կարելի շրջանցել, անտեսել կամ ոտնահարել, այլև չարաշահել. այդ կնշանակեր շեղումն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական կարգերից, որոնց առաջին սահմանողն ու շնորհողը Գրիգոր Լուսավորիչն էր, և որոնք դարերի ընթացքում ստացել են իրենց բանական կառույցը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գոյատևման ողջ ընթացքում նվիրապետական կարգերին առնչվող խնդիրներն երբեք չեն համարվել երկրորդական, չնայած ամեն անգամ չէ, որ լուծումները դյուրին են եղել:

Նվիրապետության հարցերն անբաժան են եղել ազգության ամբողջության ու համախմբվածության պահպանման հոգացումներից՝ ընդդեմ այն օտար հոլերի ու ոտնձգությունների, որոնք հայությանն աննկատելիորեն մղում էին դեպի կործանման անդունդ՝ կոտորակում, ուժացում և փոշիացում, դրանով իսկ խաթմելով ազգի ու նրա Եկեղեցու ամբողջական կերտվածքը, հեղինակազրկում հայության հոգևոր առաջնորդներին և մեծապես վտանգում ազգության հոգևոր միասնությունը: Այսպիսին էր հին դարերում ծագած համանման վեճերի բուն աստատը, նրանց սկիզբն ու վախճանը, այսպիսին են նոր ժամանակներում երևան եկած անհամաձայնությունների հետևանքները:

Հայ ժողովրդի հոգևոր միասնությունն ու առաջընթացը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հովանուց ու խնամատարությունից դուրս, հայ ժո-

ղովրդի ու հայրենիքի վերածնությունն առանց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլորանվեր մասնակցության ու նաև՝ մաքրագործման, ունայն բարբաջանք է լույս։

Միքայել Նալբանդյանի մտահոգությունն ու դժգոհությունը՝ կապված Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգերի պահպանման և գիտական լուսաբանման վիճակի հետ, հենց նման խորհրդածությունների ծնունդ էին, որքանով էլ նա իր գործունեության տարբեր շրջաններում ու այլևայլ առիթներով խիստ խոսքեր ու արտահայտություններ գործածեր այս և այն հոգևորականի անձն ու գործը գնահատելիս։

Հետագա էջերում մասնագիտական վերլուծության ենք ենթարկում Նալբանդյանի շատ հետաքրքրական նկատողություններից մեկ-երկուսը, որոնցից առաջինն ավելի քան քսան տարի առաջ հենց մենք ենք հայտնաբերել ու գիտական շրջանառության մեջ դրել (տե՛ս «Լրաբեր», 1969, № 12, էջ 61—62, «Պետրոպավլովյան բերդում Մ. Նալբանդյանի ընթերցած գրքերից մեկը»), բայց այն օրերին, բացի նորահայտ ինքնագրի մասին մատենագիտական տեղեկություններ տալուց, հնարավորություն չունեինք նրա ծագման բուն շարժառիթներին անդրադառնալու՝ թողնելով այդ հարցը ավելի նպաստավոր ժամանակների, որովհետև մեր եզրահանգումը դաշն չէր Նալբանդյանի աշխարհայացքի մասին պաշտոնական ճանաչում գտած տեսակետների հետ։

Այժմ ամբողջացնելով հին գրածը և քննության շրջանակների մեջ առնելով մի երկրորդ նկատողություն կամ գրառում ևս, որը հրատարակված լինելով տակավին 30-ական թթ., մնացել էր առանց մեկնաբանման, բնականաբար նաև՝ նրանից բխող պատշաճ հետևությունների արդյունքները ներկայացնում ենք ընթերցողներին։ Երկու բնագիրը կամ գրառումն էլ, ինչպես մեր հետազոտությունները պարզեցին, կապված էին Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգերի մասին XIII—XIV դարու պատմիչ Ստեփաննոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունների հետ, որոնցից դժգոհ էր մնացել, հարկավ, հանգամանորեն ուսումնասիրելուց հետո, Մ. Նալբանդյանը։

Բայց, նախքան բուն նյութին անցնելը, երկու խոսքով վերհիշենք քննարկվող նշումներից առաջինի շարժառիթն ու հղացման պատմությունը։

Բ.

Պետրոպավլովյան բերդում, բանտարկության ժամանակ, ինչպես հայտնի է, Միքայել Նալբանդյանը չթուլացող լարվածությամբ հետևում էր հայոց գրական-գիտական ու հանրային կյանքի նորություններին, շարունակում իր հայագիտական պարապմունքները, եղբոր միջոցով, 1863 թ. հունվարի 27-ից սկսած՝ պարբերաբար գրքեր պահանջում ու ստանում, որոնք այնուհետև ուշադրությամբ կարդում էր, վերլուծում, լուսանցքներում կամ կազմի վրա զանազան դիտողություններ անում, ապա վերադարձնում այդ գրքերը և նորերը խնդրում, երբեմն էլ հրահանգում՝ գնել այս կամ այն նոր հրատարակությունը, անգամ՝ կազմել տալ, իսկ երբ տվյալ գիրքն անձամբ ինքը չունեի, հանձնարարում էր փոխարինաբար վերցնել որևէ ծանոթից կամ հին ընկերոջից։

Ա. Ինճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» (Երևան, 1954) աշխատության մեջ արձանագրված են այդօրինակ շատ դեպքեր։ Օրինակ՝ 1864 թ. հունվարի 15-ին եղբայրը բերել է

ինչ-որ գրքեր (ո՞ւմ են պատկանել դրանք, չի՞ ասված), իսկ մարտի 11-ին Մ. Նալբանդյանն էտ է ուղարկել Քերովբե Պատկանյանից վերցված գրքերը. «Քերովբեի գրքերը ուղարկեցի»,—արձանագրված է «Բերդի հիշատակարանում»¹:

Թե Մ. Նալբանդյանն ե՞րբ էր ստացել կամ նրա եղբայրն անձամբ ե՞րբ էր բերել մասնավորապես Ք. Պատկանյանի գրքերը, հունվարի 15-ի՞ն, թե՞ փոքր-ինչ ավելի վաղ կամ ուշ, ասենք՝ վերադարձնելուց մեկ կամ երկու շաբաթ առաջ, գուցե և 1863 թ. վերջերի՞ն, դժվար է որոշակի ասել, քանի որ Նալբանդյանի «Բերդի հիշատակարանում», Պետրոպավլովյան բերդի պարետ Սորոկինի օրագրում, նույն շրջանին վերաբերող այլ թղթերում այդ առթիվ որևէ գրառում չկա: Չունենք հաստատ տվյալներ նաև այն մասին, թե ստացած կամ վերադարձրած գրքերը քանի՞ հատ էին և ո՞ւմ հեղինակությունը: Բայց միայն այն, որ այդ գրքերը կամ գրքերից մեկ-երկուսը վերցված են եղել հայագետ Ք. Պատկանյանից, բավականաչափ զորավոր կովան է, գեթ մասամբ լուծելու հարցը, որ ամենևին էլ անտեսման արժանի չէ:

Նալբանդյանի կենսագրությունն այսպիսի ատեղծվածներ շատ ունի, և նրա կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրողներն առաջիկայում դեռ շատ պիտի գլուխ ջարդեն դրանց վրա, որպեսզի կարողանան ատեղծել մեծ գրողի ու մտածողի գիտական լիակատար կենսագրությունը:

Մատենադարանի տպագիր հրատարակություններն աչքի անցկացնելիս՝ մեր ուշադրությունը գրավեց երբեմն Ք. Պատկանյանի անձնական գրադարանին վերաբերող և այժմ Մաշտոցյան Մատենադարանի սեփականությունը դարձած մի գիրք, որի կազմի կողքի վրա դրոշմված են «K. P.» լատիներեն անվանատառերը. վերջիններն էլ «մատնեցին» գրքի առաջին տիրոջը՝ **Քերովբե Պատկանյանին**: Ի դեպ, ժամանակին հիշյալ հաստատությանը կամ նախկին Էջմիածնի վանական մատենադարանին է նվիրաբերվել Ք. Պատկանյանի գրադարանի մեծ մասը, միայն թե այն պահվել է ո՛չ իբրև անկախ հավաքածո, ինչպես պետք էր սպասել, այլ տրոհվել է ու խառնվել մնացած գրքերին, ու այդ պատճառով որոնումը դժվարացել:

Մեր ուշադրությանն արժանացած գրքի խորագիրն է.

«Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, Տպարան Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց, 1861»:

Մատենադարանի գրապահոցում հիշյալ հատորը ներկայումս կրում է 4351 թվահամարը: Միջանկյալ նկատենք, որ իր՝ Մ. Նալբանդյանի անձնական գրադարանում նույնպես կա Ստեփաննոս Սյունյաց եպիսկոպոսի կամ Ստեփաննոս Օրբելյանի երկասիրության խնդրո առարկա հրատարակությունը, որ ենթադրել է տալիս, թե նա սեփական օրինակը ձեռք է բերել կա՛մ ժամանակ անց, բոլոր դեպքերում՝ 1864 թ. մարտի 11-ից հետո, որովհետև, երբ լույս տեսավ Մ. Էմինի աշխատասիրած՝ «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական» գիրքը (1861 թ.),

¹ Տե՛ս Ա. Իճճիկյան, Տարեգրություն, էջ 263 և 268: «Տարեգրության» մեջ նշված է այնուհետև, որ գրքեր է ստացել նաև 1864 թ. փետրվարի 13-ին, ու ցույց է տրված աղբյուր՝ «Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, էջ 292», ուր, սակայն, համապատասխան տվյալը բացակայում է: Թվում է՝ կամ աղբյուրն է շփոթված, կամ էլ հետազոտողի ձեռքին է եղել «Բերդի հիշատակարանի» բնագիրը, որի զույգ հրատարակությունների (1935 և 1949 թթ.) համապատասխան մասերն աղավաղված են թերևս:

Նալբանդյանն արտասահմանում էր (մեկնել էր 1860 թ. հունիսի 27-ին), կա՛մ ավելի վաղ, արտասահմանից վերադառնալուց անմիջապես հետո, Պետերբուրգում, 1862 թվականի մայիս-հունիսի ընթացքում (նա այստեղ ժամանեց 1862 թ. մայիսի 25-ին կամ 26-ին և մնաց ուղիղ մեկ ամիս), և կա՛մ թե՛ այդ նույն տարվա հունիսի վերջերին, Մոսկվայում, ուր անցկացրեց հազիվ յոթ օր (հունիսի 25-ից մինչև հուլիսի 1-ը), բայց, թերևս, գնելով հանդերձ այդ գիրքը՝ ժամանակ չունեցավ աչքի անցկացնել, որովհետև շուտով մեկնեց Նոր Նախիջևան, որտեղ և հուլիսի 14-ին բանտարկվեց ու փութով փոխադրվեց Պետերբուրգ, Պետրոպավլովյան ամրոց, իսկ գիրքը մնաց նրա իրերի մեջ կապկաված-կաշկանդված: Առավել տրամաբանականը առաջին ենթադրությունն է: Օրբելյանի պատմագրքի հետ Նալբանդյանն առաջին անգամ հիմնավորապես ծանոթացել է ըստ Մ. Էմինի հրատարակած բնագրի և Քերովբե Պատկանյանից ստացած օրինակի, իսկ սեփականը ձեռք է բերել բանտից ազատվելուց հետո: Վերջապես՝ Բ. Պատկանյանից Նալբանդյանն ուրիշ անգամներ գրքեր չի խնդրել, իսկ 1864 թ. սկզբներին ստացածներից մեկն, առանց այլևայլության, խնդրո առարկա հրատարակությունն է:

Միսական նահանգի Պատմության՝ Քերովբե Պատկանյանի օրինակից անհրաժեշտ նյութերը քաղելուց, իր անձնական հարցասիրությունը բավարարելուց հետո և գիրքը տիրոջը վերադարձնելուց առաջ, հատորի վերջում, կազմի վրա (ներսից), Մ. Նալբանդյանը սեփական ձեռքով արել է հետևյալ մատիտագիր նշումը.

«Ամբողջ գլ. ԻԶ գրեալ է ընդ ազդեցութեամբ վարդապետութեան Եկեղեցւոյն Հռովմայ և չէ համաձայն մերումս: Մ. Ն.»²:

Հիշյալ ԻԶ գլխի խորագիրն է «Վասն ինն դասուց Եկեղեցւոյ թէ ո՛րք են և ո՛րպէս վարին» (էջ 78—81), որ Ստեփաննոս Օրբելյանի Պատմության Փարիզի հրատարակության մեջ (Կ. Վ. Շահնազարյանի, 1859, էջ 149—184) արդեն դրված է ԻԷ թվահամարի տակ:

Ամենայն հավանականությամբ՝ Ստեփաննոս Օրբելյանի պատմագիրքը Նալբանդյանին անհրաժեշտ էր, որպեսզի Ղազար Փարպեցու Թղթի՝ իր թարգմանությանը կցելիք ծանոթագրությունների համար անհրաժեշտ առաջնություն քաղեր, որպիսիք սակայն նա չի գտել կամ չի վերցրել հիշյալ հատորից: Չմոռանանք, որ Նալբանդյանը գիրքը վերադարձրել է հենց այն օրերին, երբ գլխովին նվիրվել էր Թղթի թարգմանությանն ու ծանոթագրմանը: Վերջինների մեջ, հիրավի, շոշափվում են դավանաբանական խընդիրներ, բայց Թղթի ծանոթագրություններում Ստեփաննոս Օրբելյանի Պատմությանն արված հղումներ առհասարակ չկան:

Սակայն իսկապե՞ս այդ Պատմության ԻԶ(ԻԷ) գլուխը պարունակում է Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգերին հակասող, խոտոր տեսակետներ, այնպիսիք, որոնց նկատմամբ Նալբանդյանը չի կարողացել սքողել իր քննադատական վերաբերմունքը, իր դժգոհությունը:

Ասացինք՝ հիշյալ գլուխը վերնագրված է «Վասն ինն դասուց Եկեղեցւոյ թէ ո՛րք են և ո՛րպէս վարին», և հեղինակի (Օրբելյանի) թվարկմամբ՝ այդ ինը դասերը հետևյալներն են. 1. Հայրապետք կամ Պատրիարքք, 2. Արքեպիսկոպոսք կամ Եպիսկոպոսապետք, 3. Մետրապոլիտք, 4. Եպիս-

² Շարունակության վրա, ավելի ուշ, արված են այլ նշումներ, սակայն անծանոթ ձեռագրով (Ն. Մառի՞):

կոպոսք, 5. Երիցունք, 6. Սարկավագունք, 7. Դպիրք, 8. Անագանոսք (գրակարդացք) և 9. Փաալոսք (սաղմոսերգոսք):

Թեպետև եկեղեցական դասերի անունները գերակշիռ մասով ընդհանուր են ողջ քրիստոնյա աշխարհում, և ամեն մի ազգային եկեղեցի, իր հերթին, փոխադրել կամ թարգմանել է այդ անուններն ըստ իր ավանդների ու կարգերի և հենց սկզբից շրջանառության մեջ դրել ընդհանուրին հասկանալի ձևերը, բայց Ստեփաննոս Օրբելյանը, կարծես, շեղվում է ընդունված կարգից: Նրա օգտագործած եզրույթներից պարզ երևում է, որ մեծ մասը, գրեթե բառացի, փոխ է առնված օտարներից:

Եվ, ցավոք, միայն Օրբելյանը չէր, որ այդպես էր վարվում: Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ ևս, որը ժամանակով ավելի վաղ է (XII դար), հիշվում են եկեղեցու ինը դասերը, որոնցից առաջին վեցը՝ 1. Հայրապետներ, 2. Արքեպիսկոպոսներ, 3. Մետրապոլիտներ, 4. Եպիսկոպոսներ, 5. Պապասներ (այսինքն՝ Քահանաներ և Երիցներ, առաջինները՝ քաղաքներում, վերջինները՝ ավաններում ու գյուղերում), 6. Սարկավագներ,—որևէ զանազանություն չունեն Ստեփաննոս Օրբելյանի թվարկածներից, իսկ ահա՛ հաջորդ 7—9 դասերը՝ 7. Եպիսկոպոսք, 8. Գլխավորք եպիսկոպոսաց և 9. Պապիոս կամ ֆրանկ պապեր, անսքող հուշում են, որ Դատաստանագրքի տվյալ հատվածը ո՛չ միայն օտար աղբյուր է ունեցել իր հիմքում, այլև աղճատված է, որովհետև Հոռմի պապերն երբեք հայոց ազգային եկեղեցու կողմից ճանաչում գտած հոգևորականների դաս չեն եղել, և ապա, ըստ ավելի վաղ գրված՝ Ներսես Լամբրոնացու մի աշխատության, վերջին երեք դասերը, թեկուզ և օտար անունով, իրականում կոչվում էին՝ 7. Դիակոններ կամ կիսասարկավագներ, 8. Անագոնոսներ կամ ընթերցողներ և 9. Փաալոսք կամ երգեցողներ և այլն³: Մխիթար Գոշն, ի դեպ, խոստովանում է, որ այդ կարգերը «պարտին հայք ի հոռոմոց և ի փռանկաց», միաժամանակ ավելացնելով, թե հայերը պետք է հետևեն Լուսավորչի դրած կարգին, որի ցուքերը նկատվում են Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկում, և ուր վերջին դասերից հիշում են՝ **գրակարդացք և սաղմոսասացք**, երկուսն էլ ընտիր հայերեն բառեր⁴: X դարում էլ, Անանիա

³ Ներսես Լամբրոնացին (1153—1198) «Որոշումն ինն դասուց աստիճանաց եկեղեցուց» ճառի մեջ մի դեպքում այսպիսի դասակարգում է տվել՝ 1. պատրիարք, 2. արքեպիսկոպոս, 3. մետրապոլիտ, 4. եպիսկոպոս, 5. քահանա, 6. սարկավագ, 7. կիսասարկավագ, 8. ընթերցող և 9. երգեցող,—մյուս դեպքում, որը բավականաչափ տարբեր է նախորդից, հիշատակում է անգամ աշխարհիկ խավերի՝ 1. արքեպիսկոպոս, 2. եպիսկոպոս, 3. քահանա, 4. սարկավագ, 5. կիսասարկավագ, 6. ընթերցող, 7. կրոնավոր, 8. ժողովուրդ և 9. երախա: Այդ մասին տե՛ս Մ. Օրմանյան, Աթոռ Հայաստանյայց, Վաղարշապատ, 1886, էջ 10—11:

⁴ Տե՛ս Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, 1880 թ. հրատ., Ա մասի ԾԺԳ հոդվածը և այդ առթիվ հրատարակիչ Վ. Բաստամյանի ընդարձակ ծանոթագրությունները, էջ 251—260, 270—271: Եղիշեի հերոսամատյանի նույն հատվածում (Եղանակ Ե, Ղևոնդ Երեցի մարտակոչը Ավարայրի ճակատամարտի նախօրեին, տե՛ս Ե., 1957, էջ 113) հիշվում են կրոնավորության ուրիշ աստիճաններ ևս՝ այն հերթականությամբ. «Եպիսկոպոսք և երիցունք և սարկավագունք, սաղմոսերգողք և գրակարդացք»: Եթե սրանց ավելացնենք գրքի այլ մասերում հիշվող ևս երկու դաս՝ եպիսկոպոսապետ և քորեպիսկոպոս (տե՛ս նույն հրատ., էջ 72, 28 և 57), ապա կարելի է այն եզրակացությանը հանգել, որ 5-րդ դարում, հայ հոգևորականության շրջանում, պաշտոնական ճանաչում գտած դասերի ընդհանուր թիվը յոթն էր, բայց ոչ ինը:

Մոկացու Թղթերից մեկում (Գ), հայոց եկեղեցական առօրյայում, հիշվում են կրոնավորության նախ չորս կարգ՝ սարկավագ, քահանա, եպիսկոպոս և հայրապետ, իսկ հետո՝ ընդամենը վեց կարգ՝ կիսասարկավագ, գրակարդաց, սարկավագ, քահանա, եպիսկոպոս, եպիսկոպոսապետ⁵։ Բայց Անանիա Մոկացին գիտե նաև «գիննեակ դասուցն ունակութիւնսն զանազան անուամբ», և գիտակցորեն շեղվելով Դիոնիսիոսի հնօրյա սահմանումներից՝ նախ ընդհանուր ձևով հավաստում է այդ, իսկ Դ թղթի վերջին էջերում մեկ առ մեկ հիշում Եկեղեցու ինը դասերը՝ «ա. պատրիարք, բ. արքեպիսկոպոս, [գ.] մետրապոլիտ, [դ.] եպիսկոպոս, [ե.] քորեպիսկոպոս, [զ.] քահանայ, [է.] սարկավագ, [ը.] կես սարկավագի, [թ.] դպիրք», միաժամանակ եզրափակելով, թե «յոյժ պիտանացու է իննապատիկ աշտինանն ի մէջ Եկեղեցոյ, ուր և առաքելքն կարօտացան ինն անգամ առնուլ հրաման և կոչումն և այն զի ի Քրիստոսէ»⁶։

Հիշեցնենք նաև հոգևորականության ինը դասերի անուններն ըստ Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Սաղմոսացն Դարթի» երկասիրության (1405 թ.), որի գլուխներից մեկում (Է), Մխիթար Գոշի հետևությամբ (ավելի ճիշտ՝ ըստ առաջին դարի աթենացի եպիսկոպոս Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեան» գրվածքի) և համադրման սկզբունքով, հիշատակվում են նախ հրեշտակների և երկնային արարածների ինը դասերը՝ տրոհված երեք կարգերի (Ա. Աթոռք, Քերոբէք, Սերոբէք։ Բ (միջին). Տերությունք, Զորությունք, Իշխանությունք։ Գ (վերջիններ). Պետությունք, Հրեշտակապետք, Հրեշտակք), իսկ այնուհետև՝ նրանց համապատասխանությունները երկրի վրա, համախմբված դարձյալ երեք կարգերի մեջ։ Ա կարգ՝ Եպիսկոպոսապետ, եպիսկոպոս, քահանա։ Բ կարգ՝ Սարկավագ, կես սարկավագ, սաղմոսասացք։ Գ կարգ՝ Մկրտյալք (սրբազան ժողովուրդք), Երախայք և ապաշխարոք (Միանձնակյացք)։

Եվ ի վերուստ սահմանված այս երեք անգամ երեք կարգերից ու դասերից էլ միջնադարի իմաստասերները (նրանց մեջ և Գոշն ու Տաթևացին) բխեցնում էին կրոնավորության դասերը, ըստ որում՝ Գրիգոր Տաթևացին գիտակցորեն տարանջատում էր դրանք՝ համաձայն հոռմեական ու հայկական (ազգային) ավանդների, թվարկելով նախ հոռմեացոց կարգը (Պատրիարք, Արքեպիսկոպոս, Մետրապոլիտոս, եպիսկոպոս, դաս քահանայից, սարկավագունք, կիսասարկավագք, անագանոսք և փսուլաք), իսկ այնուհետև հայկականը (ներքևից վերև). 1. Դոնապանություն, 2. Ընթերցողություն, 3. Երդմնեցողություն, 4. Զահվառություն, 5. Կիսասարկավագություն, 6. Սարկավագություն, 7. քահանայություն, 8. եպիսկոպոսություն և 9. Կաթողիկոսություն⁷։ Իսկ այս վերջինի համեմատությամբ՝ Ստեփանոս Օրբելյանի գործածած անվանումները ճիշտ որ մուրացածո են և իսկապես կարող են հարուցել Նալբանդյանի նման հայագետ-բանասերի դժգոհությունը։

Հիշեցնենք վերջապես, որ մեր բուն կյանքում ու առօրյայում, մասնավորապես վերջին դարերում, այդ ինը դասերը քարացած պարտադրանք-

⁵ Տե՛ս «Նորին տեսոն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս որ ասեն, թե մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին եւ վասն մի լինելոյ կոչմանն», հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի («Արարատ», 1897, № 6, էջ 277—280)։

⁶ Տե՛ս «Արարատ», 1897, № 6, էջ 187, պուն բ. և 188, պուն ա։

⁷ Տե՛ս «Էջմիածին» (ամսագիր), 1988, № Ե—Զ, էջ 63—64։

ներ չէին և փոքր-ինչ այլ սկզբունքով էին տարանջատվում՝ կապված հոգևորականի գրաված դիրքի ու զբաղեցրած պաշտոնի հետ:

Հայոց Եկեղեցու պատմության ու ծիսակարգի հմուտ գիտակ Մաղաթիա Օրմանյանն ընդունում է նախ՝ Մեծ կամ Ծայրագույն կաթողիկոս, ապա՝ Փոքր պատրիարք կամ մասնավոր կաթողիկոս, այնուհետև՝ Մետրապոլիտ կամ արքեպիսկոպոս և վերջապես՝ եպիսկոպոս (թեմակալ առաջնորդ), ուրեմն՝ ընդամենը չորս վերին դաս կամ աստիճան, որոնց հաջորդում են մի կողմից աշխարհիկ հոգևորականները կամ Եկեղեցու սպասավորները՝ ավագ երեց, երեց կամ քահանա (առաջինները՝ գյուղերում, վերջինները՝ քաղաքներում), սարկավագ, դպիր (որ նույնն է, ինչ կիսասարկավագը), բոլորը չորս աստիճան, և մյուս կողմից՝ կուսակրոն հոգևորականության կամ վանականության դասերն ու աստիճանները՝ սարկավագ (չամուսնացած), աբեղա (կուսակրոն քահանա), մասնավոր վարդապետ, ծայրագույն վարդապետ, եպիսկոպոս⁸: Նշանակում է՝ չհաշված Եկեղեցու սպասավորների առաջին չորս աստիճանները (դոնապան, ընթերցող, երդմնեցող, ջահրնկալ)՝ վանական հոգևորականության աստիճանները ինն էին, ու բոլորն էլ հայացի անվանումներով, հետևաբար Ստեփաննոս Օրբելյանի ընդունած անվանումները այս դեպքում էլ շեղվում են հայոց ազգային ավանդներից:

Անշուշտ, Մ. Նալբանդյանի բաղձանքն էր, որ եկեղեցական առօրյայում հայությունը խուսափեր օտար միջամտություններից ու անհարկի փոխառություններից:

Եվս մի նկատողություն. Ստեփաննոս Օրբելյանի պատմագրքի՝ Նալբանդյանի անձնական գրադարանում պահվող օրինակի մեջ, ԻԶ(ԻԷ) գլուխըն ամփոփող մասերում, 78—79 երեսների արանքում, դրված է կերպարայա էջանիշ, անշուշտ, այն դիտավորությամբ, որ դրանց պարունակությունը բնության նյութ պիտի դարձվեր ավելի խաղաղ պայմաններում: Բայց նման բովանդակությամբ գրություն կամ նկատողություն Մ. Նալբանդյանի թողոններում չի պահպանվել:

Գ.

Բանտից ազատվելուց հետո (որ, համարյա, անառարկելի է) Նալբանդյանը մեկ անգամ էլ անդրադարձել է Ստեփաննոս Օրբելյանի Պատմությանը, մասնավորապես ԾԱ(51) գլխին («Ապստամբութիւն Յակոբայ և կատարած կենաց նորա, և գալն Անանիայի՝ Հայոց Կաթողիկոսի երիցս անգամ ի Սիւնիս և ձեռնադրել զՎահան եպիսկոպոս, և հնազանդել զԱղուանս»), ուր նույնպես, հպանցիկ ձևով, հիշվում են Հայոց և Հունաց Եկեղեցիների միջև, հարյուրամյակներ շարունակվող վեճերը «վասն ինն ուսուցն» (էջ 204):

Դրա իրեղեն ապացույցը մի պատառ թղթի վրա հապճեպորեն գրի առնված այն երկու-երեք տողն է, որ ներկայումս պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ Մ. Նալբանդյանի թողոններ, № 23—I(23)⁹, և առաջին հայացքից, թվում է, միանգամայն այլ հարցի են վերաբերում: Ահա՛ դրանք.

⁸ Մ. Օրմանյան, Հայոց Եկեղեցի, Ե. տիպ, Անթիլիաս, 1952, էջ 119, 125 և 129—130 ևն:

⁹ Թերթիկի հաջորդ էջի վրա կա գնելիք գրքերի մի ցուցակ կամ հիշելիք՝ Մխիթարյանների հրատարակությունների և հունարեն, լատիներեն և ֆրանսերեն լեզուներով լույս

«Անանիայի կաթողիկոսի կացելոյ [՝] ց9-երորդ դարու Գիրք Թղթոց «Հաւատոյ նամակ» առձայնեալ ի Ստեփանոսէ Սիւնեցոյն, թուի լինել ի խմբագրիս պիտանի ծանօթութեանց զհնութեանց և այլն, կորուսեալ է այժմ»:

Այս պատառիկն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Աշոտ Հովհաննիսյանը, 1935-ին, Նալբանդյանի «Անտիպ երկերի» ժողովածվի միջոցով, տարբեր ժամանակների վերաբերող երկու այլ նշումների հետ խառը, «Այլ և այլք» խմբագրական խորագրի տակ¹⁰, որից այն սխալ տպավորությունն էր ստացվում, թե այդ տողերն արտագրված են բանտարկության ժամանակ Նալբանդյանից բռնագրավված ծոցատետրից, որ, ինչ խոսք, իրական հող չունի:

Երկրորդ անգամ խնդրո առարկա տողերին հանդիպում ենք Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածվի IV հատորում, նույն խորագրի տակ ու նույն նյութերի հարևանությամբ՝ արտատպված նախորդից, բայց օժտրված կազմողի հետևյալ ծանոթությամբ. «Հավանորեն, Նալբանդյանն այս քաղվածքները կատարել է Էջմիածնի ձեռագրերից՝ 1860 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այնտեղ եղած ժամանակ»¹¹, որ հեռու է ճշմարտությունից, որովհետև ուշադիր ընթերցողը չպիտի դժվարանա պարզել, որ վերևի մի քանի տող նմուշը անմիջական կախում ունի ո՛չ թե Էջմիածնի վանական մատենադարանի ինչ-որ ձեռագրից, այլ արված է Ստեփանոս Օրբելյանի Պատմության ԾԱ գլխի ընթերցանությունից անմիջապես հետո, իսկ այդտեղ հեղինակը պատմում է Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի հարուցած երկպառակությունների, նրա նկատմամբ Անանիա Մոկացի կաթողիկոսի գործադրած խստությունների՝ անեծքի ու բանադրանքի, Զևանջիր իշխանի որդի Վահանին Սյունյաց եպիսկոպոս ձեռնադրելու և Հայոց Եկեղեցու միասնությունը պահպանելու նպատակով կաթողիկոսի ու վերջինիս միջև կնքված գրավոր պայմանի մասին, որի բնագիրը հետո մուծվել է Գիրք Թղթոց ժողովածվի մեջ: Նալբանդյանի աչքի առաջ ունեցած տողերը հետևյալներն են. «Եւ կնքեալ զայս վճիռ իւրեանց մատանեալ՝ ետուն ի ձեռս կաթողիկոսին, զորս աւելորդ համարեցաք գրել. զի կան լիով գրեալքն ի գիրս թղթոցն, զոր ժողովեալ է սոյն Անանիա, որ Հաւատոյ նամակ անուանի»¹²:

Նալբանդյանը, սակայն, Ստեփանոս Օրբելյանի Պատմությունը վերըստին կարդալիս՝ այնքան ուշադիր չի եղել: Անանիան, իրականում, ոչ թե 9-րդ դարում ապրած հայոց հայրապետներից է. այդ հարյուրամյակում մենք Անանիա անունով կաթողիկոս առհասարակ չենք ունեցել, այլ նշանավոր մատենագիր ու հոգևոր գործիչ Անանիա Մոկացին (գահակալել է 946—968 թթ.), դասընկերը նույնքան հռչակավոր Անանիա Նարեկացու:

տեսած պատմական սկզբնաղբյուրների, որպիսի «շոալություն» Նալբանդյանը կարող էր իրեն թույլ տալ ազատության մեջ գտնվելիս, իսկ նա Պետրոսապոլիսյան բերդից արձակվեց՝ ազատ աքսոր ուղարկվելու համար, 1865 թ. մայիսի 13-ին (տե՛ս «Միքայել Նալբանդյան», Վավերագրերի ժողովածու, էջ 241 և 244): Հետևաբար, Օրբելյանի գրքի նոր ընթերցման հետևանք հանդիսացող այդ մատիտագիր նշումը կարող էր արվել 1865 թ. մայիսի կեսերից հետո միայն:

¹⁰ Տե՛ս Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Ե.—Մ., 1935, էջ 254: Վերծանելիս թույլ է տրված մի աննշան անճշտություն՝ «ծանօթութիւն»:

¹¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Ե., 1949, էջ 281 և 385:

¹² Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, էջ 208:

Անանիա Մոկացու Թղթերի ամբողջական ժողովածուն, ճիշտ է, հայագիտությանն առ այսօր ծանոթ չէ, բայց միջնադարյան ձեռագրերում պահպանվել են մի քանի կարևորների բնագրերը, ու նրանց մեջ՝ Նալբանդյանի հետաքրքրությունը շարժած ու երկար ժամանակ կորած համարված և այդ «Հաւատոյ նամակը»: Անցյալ դարի 90-ական թթ. այն հայտնաբերեց և հրատարակեց Գալուստ Տեր-Մկրտչյանը: Խորագիրը հետևյալն է. «**Տեառն Անանիայի Հայոց Կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան Տանն Աղուանից**»¹³: Բնույթով ու բովանդակությամբ բնագիրն այս ավելի պատմական բացառիկ արժեքի փոքրածավալ ու անկախ երկ է հիշեցնում, քան սովորական նամակ:

Նկատենք և այն, որ Ամենայն հայոց կաթողիկոսության և Աղվանից ու Սյունյաց աթոռակալների (նաև քաղաքական իշխանությունների) միջև բորբոքված բուռն վեճերի մեջ քիչ դեր չի խաղացել նվիրապետության խնդիրը՝ նայած թե տվյալ պահին Սյունյաց կամ Աղվանից Եկեղեցիների պետերը հոգևոր ի՛նչ աստիճան կրելու իրավունք ունեին, որին համապատասխան և որոշվում էր նրանց ենթակայությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, մի անփոփոխ իրավիճակ, որ սահմանված էր տակավին Գրիգոր Լուսավորչի օրերում և որի դեմ դարեր անց ըմբոստանում ու չէին ուզում ընդունել Աղվանից ու Սյունյաց հոգևոր տեսուչներից ոմանք՝ քաջալերված աշխարհիկ տերերից:

Ուխտանես Եպիսկոպոսի Պատմության Երկրորդ հատվածում («Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց») այդ առնչությամբ ուշագրավ նկատողություններ ենք գտնում. «Ընդ յայնու ժամանակս,—ձայնում է պատմիչը,—մինչ բաժանեալ ունէին Պարսիկք և Յոյնք ի միջի իւրեանց զաշխարհս Հայոց. եղև քննութիւն ի մէջ Հայոց և Յունաց վասն դասակարգութեանն Եկեղեցւոյ նման ինն դասուցն վերնոց, զի վիճէին Յոյնք և մեծաբանէին ի վերայ Հայոց, եթէ՝ զի մեր, ասէին, ինն դասակարգութիւնք եկեղեցւոյ, և ձերն՝ ոչ»¹⁴: Ուխտանեսը թվարկում է նաև այդ ինը դասերը հունական անվանումներով՝ «Պատրիարքք, Արքեպիսկոպոսք, Մետրոպօլիտք, Եպիսկոպոսք, Քահանայք, Սարկաւագք, Կիսասարկաւագք, Կղերիկոսք և Գրակարդացք», հիշեցնելով միաժամանակ, թե Հայոց կաթողիկոսները հարևան Եկեղեցիների հետ իրենց պաշտոնական փոխհարաբերությունները մշակելիս՝ ո՞րին են վերապահել այս կամ այն դասը:

Քրիստոնեության առաջին դարում, Թադեոս առաքյալի ժամանակ, Հայաստանում դեռ չկային Պատրիարք, Արքեպիսկոպոս, Մետրապոլիտ և այլ դասեր, բայց Գրիգոր Լուսավորչի օրերից սկսած, երբ նա իր թոռանը՝ Գրիգորիսին, ձեռնադրում է Աղվանից առաջնորդ, զգացվում է դասերի անհրաժեշտությունը, և Աղվանից Եկեղեցու պետերին է վերապահվում Հայոց արքեպիսկոպոսության պատիվը: Ժամանակ անց, երբ քրիստոնեությունն են ընդունում նաև վրացիք, նրանց Եկեղեցուն է հատկացվում հաջորդ՝ մետրապոլիտության պատիվը: Բայց ահա՛ երբ Աբրահամի կաթողիկոսության շրջանում (607—615) վրացիք սկսեցին վեճեր հարուցել այդ կապակցությամբ և պահանջել ավելի բարձր դասի՝ արքեպիսկոպոսության պատիվ, նրանց Կյուրիոն կաթողիկոսն այսպես էր սովետաբանում. «Զի՞ եղև ինձ

¹³ Տե՛ս «Արարատ», 1897, № 3, էջ 129—144:

¹⁴ Ուխտանես Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, հատված Բ, էջ 119:

այս փոքրկանայս ի քէն, քանզի ես աւագ եմ, քան զնա (այսինքն՝ Աղվանից կաթողիկոսը—Պ. Հ.), և մեծ ի տան իմում, և այս տանս գահերէցութիւնս նախ իմ էր, և ապա դորա» և այլն¹⁵: Հայոց կաթողիկոսը, բնականաբար, չէր կարող ոտնահարել դարավոր կարգը և գոհացում տալ Կյուրիոնի փառամոլութեանը, որն ավելի հեռահար նպատակներ էր հետապնդում:

Երբ 608 թ. Վրաց Եկեղեցին վերջնականապէս անջատվում է հայերից և ընդունում քաղկեդոնականություն, նոր իրադրությունների թելադրանքով՝ Հայոց կաթողիկոսը մետրապոլիտության պատիվն այսուհետև շնորհում է Սյունյաց տէրերին. «Նոցա ետուն պատիւս լինել մետրապօլիտս Հայոց... և այսպէս՝ կարգ ըստ կարգի հաստատեցին զինն դասս, և եղեն մի հօտ և մի հովիտ՝ յայնժամ և այժմ, և մինչև ի վախճան ժամանակաց իրեանց»¹⁶:

Նալբանդյանի պատասիկների քննությունը մեզ հեռուն տարավ: Եկեղեցու ինը դասերի վերաբերմամբ Ստեփաննոս Օրբելյանի պաշտպանած տեսակետների մասին Նալբանդյանի հայտնած ակնհայտ դժգոհության իրական պատճառները բացահայտելիս՝ հարկադրված եղանք մխրճվել դավանաբանական վեճերի մեջ, վկայակոչել հին ու միջնադարյան գրավոր աղբյուրներ, որպէսզի անտեղյակներն հնարավորություն ստանան տվյալ խնդիրների մասին սեփական կարծիք ունենալու:

Այդ թափառումների ընթացքում պարզեցինք նաև, որ դեռ հնուց, ազգային Եկեղեցու նվիրապետական իրավիճակի մասին ճառող մատչանքների ու կանոնագրերի միջև տիրել է անհամաձայնություն ու շփոթ, յուրաքանչյուրը յուրովի է կոչել այդ դասերից մեկը կամ մյուսը ու հաճախ էլ հիշատակելով ոչ բոլոր ինը դասերը անուն առ անուն: Արդեն այսօր հիշյալ խընդիրները կարիք ունեն որոշակի ճշգրտման ու ձերբազատման՝ անորոշության ու անհետևողականության գերությունից: Այդ առումով՝ մենք սպասում ենք Հայոց եկեղեցական իրավունքի գիտակների նկատողություններին ու հեղինակավոր լուսաբանություններին:

Դ.

Եթե առաջին երկու դեպքում Նալբանդյանի բուն դիտավորությունը թաքնված էր գերհամառոտ նշումների խորքում, և խիստ դժվար էր այն կռահել, ապա դարձյալ բանտում, բայց արդեն 1865 թ. փետրվարի վերջերին կամ մարտի առաջին օրերին, մինչև առիթ է ներկայանում ծանոթանալու Գաբրիել Այվազովսկու կոնդակին՝ ուղղված Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Հայոց հոգևոր թեմի ծխականներին (նրանց մեջ նաև Պետերբուրգի հայությանը), որ արձակված էր փետրվարի 19-ի ուրբաթ օրը և կարգադրված, որ առաջիկա կիրակիներից մեկում ընթերցվի թեմի եկեղեցիներում, նա ներքին, բուն պահանջ է զգում անթաքույց ձևով իր վերաբերմունքն արտահայտել նվիրապետական հարցերի, ներկա դեպքում՝ թեմական առաջնորդի իրավասության սահմանների ու պարտականությունների մասին:

Առաջիկա կիրակին կամ կիրակիները ընկնում էին փետրվարի 21-ին, 28-ին և մարտի 7-ին: Այվազովսկու կոնդակը Պետերբուրգի եկեղեցում կարող էր կարդացվել, մեր կարծիքով, միայն փետրվարի 28-ին: Նրա բո-

¹⁵ Նույն տեղում, էջ 116:

¹⁶ Նույն տեղում, էջ 122:

վանդակության մասին Նալբանդյանը կարող էր լսել մոտիկ բարեկամներից, որոնց թույլատրված էր այցելել նրան բանտում: Նման գրույցներ Նալբանդյանն ու իր բարեկամները կարող էին ունենալ մարտի սկզբներին: Շատ հնարավոր է, որ Նալբանդյանի ցանկությամբ, կամ անկախաբար, բարեկամները նրան տրամադրած լինեին նաև կոնդակի պատճենը, որին հանգամանորեն ծանոթանալուց հետո, հենց մարտի առաջին օրերին էլ, Նալբանդյանի մեջ միտք է հղացել հրապարակային կոչով պատասխանել նրան և ցույց տալ Այվազովսկու մերժելի գործելակերպը համազգային հարցերում, որն, ի վերջո, հայությանը մղում էր դեպի բաժան-բաժանություն ու կոտորակում:

Ի՞նչն էր դրդել Գ. Այվազովսկուն նման հանդուգն քայլի, քանի որ թեմակալ առաջնորդներն, ըստ Հայոց Եկեղեցու ավանդների, սովորաբար, կոնդակներ չէին արձակում, և վերջինների գրության մենաշնորհը վերապահված էր բացառապես կաթողիկոսներից:

1865 թ. սկզբներին, անսալով Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի ներկայացուցիչների շարունակական դիմումներին (գրավոր ու բանավոր), Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցին (1858—1865, օգոստոս) ազատեց Գ. Այվազովսկուն թեմական առաջնորդի պարտականություններից և փոխարենը նշանակեց Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունուն: Այս բանը խոր խոցեց Այվազովսկուն ու նրա գաղափարակիցներին, որոնք փորձելով չհնազանդվել կաթողիկոսի կամքին, միտք հղացան օգնության կանչել Ռուսական կայսրության մեջ գործող օրենքները, որոնց գործությամբ նման նշանակումն անհիմն էր, քանի որ թեմական առաջնորդները պաշտոնի էին կոչվում կայսերական հաստատմամբ միայն: Նշանակում է, կարելի էր Հայոց Եկեղեցու պետին լուեցնել կայսեր անունով:

Կոնդակի գրության շարժառիթը և գլխավոր փաստարկը, թվում է, գրտնրված էր: Եվ Գ. Այվազովսկին անհապաղ գործի է անցնում ու կարճ ժամանակում շարադրում խնդրո առարկա շրջաբերական նամակը: Այդտեղ նախ՝ նա սեփական անձը և արած ու չարած (անելիք) գործերն էր թըմբկահարում, առաջնորդ նշանակվելու օրից, այսինքն՝ 1858-ից սկսած իր ծավալված բարենորոգչական և լուսավորական գործունեության, Նոր Նախիջևանում բորբոքված կուսակցական կոիվներից վերջ դնելու, ժողովրդական գումարներով դպրոց ու տպարան բաց անելու և լրագիր հիմնելու մասին պատմում, իսկ այնուհետև՝ անդրադառնալով հակառակորդների նյութած դավերին, որոնք Ամենայն հայոց կաթողիկոսի առջև, իբր, ծուռ հայելու մեջ են ներկայացրել իր գործունեության արգասավոր հետևանքները, դրանց հանրօգուտ ու խաղաղարար բովանդակությունը և որոնց պատճառով քաջալերանքի փոխարեն արժանացել է պատժի, բացորոշ հայտարարում էր, որ Մատթեոս կաթողիկոսն իրավունք չունի իրեն ազատելու պաշտոնից և տեղը նշանակելու այլ հոգևորականի, որովհետև, ըստ կայսերական օրենքների, Ռուսաստանի հայոց հոգևոր թեմերում առաջնորդներ կարող է նշանակել ու հաստատել միայն թագավոր-կայսրը: Նա պահանջում էր իր թեմի ծիսականներից, ինչպես էլ զարգանային դեպքերը՝ թեմական առաջնորդ նանաչել միայն կայսեր նշանակածին, այսինքն՝ իրեն, և ոչ թե ուրիշ մեկին, այսինքն՝ կաթողիկոսի նշանակածին, առանց հաշիվ տալու իրեն, թե ինչի էր հանգեցնում այսպիսի կոչը, որից հետո անհիմաստ էին դավանաբանա-

կան հարցերում Լուսավորչի Աթոռի գահակալին հնազանդ մնալու փարիսեցիական հրավերները:

Սևով սպիտակի վրա կարդալով հոգևորականի բարոյական ընթացքին անհարիր մեծ կոչեր, հոգևորական, որի համար դավանանք փոխելը կենցաղ էր դարձել, Նալբանդյանը լցվում է բուռն զայրույթով և անհապաղ թղթին հանձնում մի ցասկոտ հրապարակային ազդարարություն՝ «Ընդունելություն Այվազի կոնդակին» անվել խորագրով, որը առ այսօր մի անգամ է միայն մեջ բերվել, այն էլ Ե. Շահագիզի «Միքայել Ղազարյան Նալբանդյանը» աշխատության մեջ (Մոսկվա, 1897, էջ 73—74) ու մի անգամ էլ արժեքավորվել՝ Աշոտ Հովհաննիսյանի նշանավոր Կոմենտարներում, որպես «ցարիզմի և նրա վեղարավոր ագենտների դեմ «Նալբանդյանի մղած ազգային-քաղաքական պայքարի յուրօրինակ տեսակ»¹⁷: Սա հարցի միակողմանի մեկնություն է:

Նալբանդյանն այդ կոչով պահանջում էր Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայ հավատացյալներից անվերապահ հարգումն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան, իշխանության ու հեղինակության, որ ասել է, թե սրբությամբ հետևելու Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգերին՝ պատվար կանգնեցնելու համար հերձվածների և ազգային միասնության քայքայման դեմ:

Ինքը՝ Նալբանդյանը, խոսում է ավելի դիպուկ ու պատկերավոր, ուստի ունկնդրենք նրա ձայնին. «Անցյալ օրերում մեր եկեղեցու բեմից կարդացվեց Այվազյան վարդապետի թուղթը, որով դառնում է նա դեպի ժողովուրդը և ինքն իրեն անթիվ գովասանություններ տալուց հետո (եթե ուրիշները չեն գովում, բա ի՞նչ անի) ընդդեմ մեր Եկեղեցվո դարևոր ավանդություններին՝ միօրինակ հանդգնությամբ ձեզ Ա. բեմից գրգռում է դեպի անհնազանդություն Գրիգոր Լուսավորչի Աթոռակալին: Ձեր լուրջունը, այդպիսի ապստամբված գործի դեմ, տեղի կտա էսօր Այվազին, էգուց՝ Կիրակոսին, մյուս օրը՝ Մարկոսին, պատերազմ քարոզել մեր Ա. Աթոռի դեմ և պատրաստել այն հերձվածի և բաժան-բաժանության անդունդը, որ սպառնում է կուլ տալ մեր ազգի կորած-մնացած փառքի վերջին նշխարքը: Թեև նա հիմնվում է, իբր, կայսերական օրենքի վրա, բայց ոչ մի կայսերական օրենք թույլ չի տալի մի որևիցե աբեղայի եկեղեցու բեմից գրգռել ժողովուրդը յուր Հոգևոր գլխի դեմ, կամ ավելի պարզ ասել՝ յուր եկեղեցու անկախության դեմ»:

Նոր ուժգնությամբ են հնչում Նալբանդյանի մարտահրավերի հետագա տողերը, որոնք արդեն ուղղված են ոչ միայն Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի հայոց հոգևոր թեմի ծխականներին, այլև համայն հայությանը, քանի որ արժարժվող հարցն ուներ համազգային բովանդակություն՝ Հայոց Եկեղեցին կարիք ուներ բոլորի հոգաժությանն ու պաշտպանությանը. «Հայե՛ր, եթե տակավին չեք ամաչում պարծենալ ձեր կրոնի անկախությունովը, եթե տակավին ձեր սրտի խորքում մնացել է այն սուրբ զգացմունքը, որ մի ժամանակ ոգի էր տալիս ձեր ազգին և կրոնի պաշտպաններին, չպետք է թույլ տալ, որ մի սևահոգի (հազար փա՛ստ), հավատը օրացույց շինող եզվիտ աբեղա, յուր կեղտոտ ոտերով կոխի ձեր ազնիվ սրտերը և կտրատի ձեր կրոնի այն սուրբ կապը, որ համարյա՛ միայն պահել է մինչև այսօր հայի ազգությունը»:

¹⁷ Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Ե.—Մ., 1935, էջ 373:

Սույն կոչի մեջ արդեն ասածն ամփոփելու և նորից նոր Այվագովսկու ներքին էությունը ի ցույց դնելու նպատակով Նալբանդյանը դիմում է նաև գեղարվեստական հնարանքի՝ մեջ բերելով Ռափայել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմից մի քանի տող, որ կարևոր է և մեկ այլ առումով. դա պարտադրում է մեզ, գեթ այսուհետև, զգուշանալ Նալբանդյանի ու Պատկանյանի անձնական ու գաղափարական թշնամանքի մասին գեղեցիկ լեգենդներ հորինելուց և մտածել վերջին տարիներին նրանց գաղափարական մերձեցման շուրջ, որ, թվում է, բնավ էլ անհնար չէր:

Պատկանյանի խոսքերը, կարծես, տրամաբանական ավարտ ու եզրափակում լինեն Նալբանդյանի մտքերի ու վերաբերմունքի՝ հանդեպ Այվագովսկին.

Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղավ,
Գառնազգեստ գալլը մեզ գլուխ դառավ.
Սուրբ խորան պղծեց, արդ ո՞ր աղոթենք—
Հիմի՞ էլ լռենք ...

Այս տողերը քաղված են պոեմի 10-րդ գլխի «Վարդանի երգը» հատվածից (7-րդ տան 3—6 տողեր): Բայց պոեմի ինչպես մեզ հասած միակ մաքրագիր ինքնագրում (պահվում է Գրականության և արվեստի թանգարանում, Ռ. Պատկանյանի թողոններ № 2գ), այնպես էլ առաջին հրատարակության մեջ («Կոունկ հայոց աշխարհին», 1861, № 7) վկայակոչված տողերը հնչում են այլ բառակապակցության մեջ և փոքր-ինչ այլ կերպարանքով.

Հիմի է՛լ լռենք, երբ մեր թըշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղավ,
Գառնազգեստ գալլին մեզ գլուխ դըրավ,
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ր աղոթենք,—
Հիմի է՛լ լռենք ...¹⁸

Նալբանդյանը, որ հրաշալի գիտեր Պատկանյանի հատկապես այդ ստեղծագործությունը և «Վարդանի երգի» մասին էլ գրել էր պարոդիա՝ «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը», գիտակցորեն կրճատել է առաջին երկու տողերը, իսկ հաջորդ երկուսը՝ խմբագրել.

Գառնազգեստ գալլը մեզ գլուխ դառավ,
Սուրբ խորան պղծեց ...

Ցավոք, հրապարակային կոչի ձեռագիրը, որը Շահագիզին էր ընծայել Նոր Նախիջևանցի բժիշկ Անդրեաս Սալտիկյանը, այժմ կորած է, և մենք զրկված ենք բնագրի վրա հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքը ուսումնասիրելու հնարավորությունից: Բոլոր դեպքերում, փոփոխությունները երկուսն էլ էական են, ընդգծում են թեմակալ դառնալիս Գարիել Այվագովսկու կողմից հանրության կարծիքն արհամարհելը և ամեն-

¹⁸ «Կոունկ հայոց աշխարհին», 1861, № 7, էջ 523:

քին իր կամքը պարտադրելու ձգտումը, որն ընդհանրապես մերժելի էր Հայոց Եկեղեցու կյանքում, մինչ այստեղ տիրում են կատարյալ ժողովրդավարական սկզբունքներ: Նրա թեմակալության ամենամուսյլ արդյունքը բնութագրված է «պղծված խորան» մակդիրով, որ ասել է, թե նա ոտնահարում է ազգային նվիրական ավանդները՝ կապված մասնավորապես կաթողիկոսի անձի ու հեղինակության հետ:

Նալբանդյանը այսքանով դեռ չի ավարտում իր խոսքը: Նա հարկ է համարում զգուշացնել ունկնդիրներին չխաբվել քաղցր-մեղք արտահայտություններից և սեփական ձեռքով ճանապարհ չհարթել հայության կործանման համար:

«Այվազյանը՝ Լոյովայի հարազատ ժառանգը գոյով ամենայն կողմից, ուզում է ծածկել յուր կոշտ և կոպիտ երկպառասիրությունը, փառամոլությունը, ապստամբությունը հետևյալ փափուկ խոսքերով թղթի վերջում, իբր, «Հնազանդեցեք էլի Ս. Աթոռին, Աթոռակալին...»: Բայց չխաբվե՛ք, եղբա՛րք, գլխավոր միտքը սկզբումն է և բոլոր թղթի բովանդակությունում: Այդ այն օրորն է, որով երեխային քնացնում են»:

Եկեղեցու անկախությունը, Եկեղեցու ներսում նվիրապետական կարգերի անթերի պահպանումը, կաթողիկոսի իշխանության անվերապահ ընդունումն ու նրա անձի հարգումը, Սուրբ Աթոռի դեմ պատերազմների վերացումը այն կարևոր ուղիներն էին, որոնք մեծապես պիտի օգնեին պահպանելու ազգի կորած մնացած փառքի վերջին նշխարները, կասեցնելու հերձվածների տարածումը, ետ պահելու հայությանը վտանգավոր հովերից, որպեսզի նա խուսափի գլորվելու բաժան-բաժանության անդունդը: Միքայել Նալբանդյանի հոգացումը ներկա դեպքում այս էր ու դրանով էլ նա պահպանում է իր պատմական նշանակությունն ու արդիական հնչեղությունը: Այդ ազնիվ մղումներով էր պայմանավորված նաև նրա դժգոհությունը միջնադարյան հայ պատմիչների առանձին վկայություններից, որոնք իրականում անբնադատ փոխառումներ էին օտար և աչառու աղբյուրներից:

